



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 94ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ ՈԳԵԿՈԶԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԵՄԻՍ ՄԵՋ

Ուրբաթ, Ապրիլ 24-ին, Հայկական Ցեղասպանության 94-րդ տարելիցին առիթով, հայ ժողովուրդը, մայր հայրենիքին թե սփիւռքեան օճախներու մէջ, բազմազան նախաձեռնութիւններով ու հանդիսութիւններով պիտի յարգէ յիշատակը մեր 1.5 միլիոն նահատակներուն:

Մեր Թեմէն ներս եւս, այս տարի նոյնպէս տեղի պիտի ունենան ժողովրդային զանազան ձեռնարկներ, բողոքի ցոյցեր ու քայլարշաւներ:

Ժամանակագրական կարգով, հետեւեալ ձեռնարկներն ու յուշահանդէսները նախատեսուած են յառաջիկայ օրերուն, որոնց համար Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ստացած է պաշտօնական հրաւերներ:-

Ցեղասպանության զոհերու ոգեկոչման ու յարգանքի արարողութիւն մը տեղի պիտի ունենայ Երեքշաբթի, 21 Ապրիլին, Լոս Անճելըսի Board of Supervisors-ի նիստին. օրակարգին վրայ է Հայկական Ցեղասպանության մասին հռչակագիրի մը որդեգրումը: Ձեռնարկը կազմակերպուած է Supervisor Մայքըլ Անթոնովիչի գրասենեակին կողմէ:

Չորեքշաբթի, 22 Ապրիլի երեկոյեան ժամը 6:00-ին, Մայրաքաղաք Washington-ի Capitol Hill-ի Cannon House Office Building-ի մէջ Հայկական Ցեղասպանության Ոգեկոչման յիշատակումը պիտի կատարուի:

Կազմակերպութեամբ Լոս Անճելըս քաղաքի իրաւաբան Rocky Delgadillo-ի գրասենեակին, Չորեքշաբթի, 22 Ապրիլի երեկոյեան ժամը 6:00-ին, Լոս Անճելըսի քաղաքապետարանին մէջ, հայկական արուեստի ցուցահանդէս մը տեղի պիտի ունենայ:

Հինգշաբթի, 23 Ապրիլի կէսօրին, Sacramento-ի մէջ, Զալիֆորնիոյ խորհրդարանի երկու տուները իրենց նիստը յատկացուցած են Հայկական Ցեղասպանության յիշատակումին:

Նշենք, որ Զալիֆորնիոյ նահանգապետ Արնոլտ Շուարցընսկըրի գրասենեակը Հինգշաբթի, 16 Ապրիլին, հրատարկեց պաշտօնական հաղորդագրութիւն մը, որ Հայկական Ցեղասպանության յիշատակումի օրեր կը հռչակէ Ապրիլ 19-էն 26 շաբաթը:

Յիշեցնենք, որ նահանգապետը անցեալ տարիներուն ալ նման հռչակագիրներ հրատարակած էր:

Ուրբաթ, Ապրիլ 24-ի առաւօտեան ժամը 10-ին, Լոս Անճելըսի քաղաքապետարանին մէջ տեղի պիտի ունենայ Հայոց Ցեղասպանութեան 94-ամեակին նուիրուած ոգեկոչման յարգանքի յատուկ արարողութիւն մը, որ կազմակերպուած է քաղաքապետարանի կողմէ, գլխաւորութեամբ քաղաքապետական խորհուրդի նախագահ Էրիք Կարսեթիի:

Նոյն օրը՝ Ուրբաթ, Ապրիլ 24-ին, առաւօտեան ժամը 10:30ին, Ցեղասպանութեան Նահատակներուն յիշատակին Ս. Պատարագ պիտի մատուցուի Մոնթայելլոյի Յուշարձանին առջեւ, Bicknell Park-ի մէջ, մասնակցութեամբ Հայ Առաքելական, Հայ Կաթողիկէ եւ Հայ Աւետարանական Եկեղեցիներու Հոգեւորականներուն:

Պիտի պատարագէ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Առաջնորդ Արեւմտեան Թեմի:

Պիտի քարոզէ Գերշ. Տ. Յովնան Արք. Տերտրեան, Առաջնորդ Արեւմտեան Թեմի:

Աւետարանի ընթրցումը պիտի կատարէ Հոգշ. Տ. Անտոն Վրդ. Սարոյեան, Ժողովրդապետ Հայ Կաթողիկէ համայնքի:

Առաքելական Թուղթի ընթրցումը պիտի կատարէ Վերապատուելի Յովսէփ Մաթոսեան, Հովիւ Հայ Աւետ. Եկեղեցիներու Միութեան:

Յաւարտ Ս. Պատարագի, Յուշարձանին առջեւ ոգեկոչական ձեռնարկ եւ հանդիսաւոր հոգեհանգիստ պիտի կատարուի մեր բիրաւոր նահատակներուն յիշատակին, մասնակցութեամբ պետական ու պաշտօնական անձնաւորութիւններու եւ ներկայացուցիչներու:

Յայտնենք նաեւ, որ նոյն օրը, մեր ուխտաւոր ժողովուրդը ծաղիկ պիտի զետեղէ Յուշարձանին:

94TH ANNIVERSARY COMMEMORATIONS OF THE ARMENIAN GENOCIDE

On Friday, April 24th, 2009, the 94th anniversary of the Armenian Genocide will be commemorated by Armenians worldwide, as well as within the Western Prelacy.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, has been invited to participate in the following events:

The Prelate received an invitation from Supervisor Michael Antonovich to participate in a special presentation during the Board of Supervisor's weekly meeting, proclaiming April 24 as the "Day of Remembrance for the Armenian Genocide of 1915-1923". The presentation will take place on the morning of Tuesday, April 21st.

On the evening of Wednesday, April 22nd, a commemoration will take place at the Capitol Hill Cannon House Office Building in Washington, D.C.

Los Angeles City Attorney Rocky Delgadillo and the City Attorney's office have organized an event in celebration of Armenian art and culture showcasing the works of Armenian artists at Los Angeles City Hall on the evening of Wednesday, April 22nd.

A commemoration will also take place at the California State Legislature in Sacramento on Thursday, April 23rd. On April 16th, Governor Arnold

Schwarzenegger proclaimed the week of April 19th through the 26th as “Days of Remembrance of the Armenian Genocide”.

The Los Angeles City Council, headed by President Eric Garcetti, has organized a commemoration which will take place on the morning of Friday, April 24th at City Hall.

Also on Friday, April 24th, a community-wide commemoration will take place at the Armenian Genocide Memorial Monument in Montebello beginning with Divine Liturgy with the participation of the Armenian Apostolic, Catholic, and Evangelical Churches.

Divine Liturgy will be celebrated by the Prelate, the sermon will be delivered by H.E. Archbishop Hovnan Derderian, Primate, Gospel reading by Very Rev. Fr. Andon Saroyan, Rector of the Catholic Church, and Epistle reading by Rev. Joe Matossian, Minister of the Armenian Evangelical Union of North America.

Requiem services and commemorations will follow Divine Liturgy.

Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԹԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԱՏԱՐԱԳԵՑ Ս. ԱՍՏՈՒԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին Կիրակի, 12 Ապրիլին տօնեց Քրիստոսի Ս. Յարութեան յիշատակը: Այս առիթով, մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ տեղի ունեցաւ Ս. Պատարագ ու մեր հաւատացեալ ժողովուրդը «Քրիստոս յարեալ ի մեռելոց» աւետիսով յիշատակեց մահուան վրայ Աստուածորդոյն յաղթանակը:



Թեմիս քարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ս. Պատարագ մատուցանեց Կլենտելի Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ: Իր պատգամին մէջ, Առաջնորդ Սրբազանը փառք տուաւ Աստուծոյ, որ մեր եկեղեցոյ զաւակներուն առիթը շնորհած է անգամ մը եւս տօնելու Քրիստոսի հրաշափառ Ս. Յարութեան տօնը, միաժամանակ բոլորին աւետելով.

«Քրիստոս յարեալ ի մեռելոց, օրինեալ է յարութիւնս Քրիստոսի»: Ան յիշեցուց, որ Մեծ Պահոց եօթը շաբաթները եղան վերանորոգութեան շրջան մը, իսկ Աւագ Շաբաթը եղաւ Աստուածորդոյն երկրաւոր կեանքի վերջին փորձառութիւններն ու Առաքեալներուն հետ անցուցած խորհրդաւոր պահերուն վերապրումի շրջան մը: Ան կէտց, որ այսօր, կը տօնենք Յիսուսի յաղթական Ս. Յարութիւնը, ու այս առիթով, վեր առաւ Ս. Յարութեան ճշմարտութիւնը հաւատացեալի կեանքին մէջ ու աւելցուց, որ մարդկութեան փրկութեան ի խնդիր խաչը հանուելէ ու մահը ճաշակելէ ետք, յարութիւն առնելով, Յիսուս կեանքի յաղթանակը արձանագրեց, ցոյց տալով, որ մահը

վախճան մը չէ հաւատացեալին համար. Ան մեր կեանքերը աստուածահաճոյ ընթացքով վերանորոգելու պատգամը տուաւ մարդկութեան, որպէսզի արժանի ըլլանք յաւիտենական կեանքի:

PRELATE CELEBRATES EASTER DIVINE LITURGY AT ST. MARY'S CHURCH

On Sunday, April 12th, 2009, the Glorious Resurrection of our Lord was celebrated in all Prelacy churches and parishes with Divine Liturgy. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy and delivered the sermon at St. Mary's Church in Glendale, where thousands of parishioners had come to celebrate this Glorious Feast.



Prior to his sermon the Prelate thanked God for bringing together the children of the Armenian Apostolic faith to celebrate together the Resurrection of our Lord Jesus Christ and proclaim triumphantly, "Christ is risen from the dead, blessed is the Resurrection of Christ". The Prelate noted that seven weeks ago we embarked on a journey of reflection and renewal, and during Holy Week relived the atmosphere that

Jesus' disciples and followers lived during the last days of His earthly life, and now we have reached the blessed day when we celebrate His Resurrection and triumph over death, which continues to illuminate our lives today.

The Prelate reminded the faithful that Easter is a time of renewal and revival, a time to rise victorious from the burden of our worries and troubles and triumph over our weaknesses just as He triumphed over death, and urged them to live their lives strengthened by this message of the Resurrection to be worthy of new life and eternal life.

ՔՐԻՍՏՈՍԻ ԹԱՂՄԱՆ ՅԻՇԱՏԱԿՈՒՄ ՈՒ ՃՐԱԳԱԼՈՅՑ ԹԵՄԻՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Աւագ Շաբթուան վերջին երկու օրերը նուիրուած են մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի երկրաւոր կեանքի ամենէն տխուր յիշատակներուն՝ անոր կրած չարչարանքներուն, իսաչելութեան, թաղման, սակայն նաեւ անոր Ա. Յարութեան աւետիսին նախապատրաստութեան:

Աւագ Ուրբաթ օրը, մեր Թեմի բոլոր եկեղեցիները յատուկ արարողութիւններով նշեցին Զրիստոսի թաղման յիշատակը:



Թեմիս Բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ուրբաթ, 10 Ապրիլի երեկոյեան, Օրէնճ Քաունթի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ հանդիսապետեց Թաղման արարողութեան: Իր պատգամին մէջ, Առաջնորդ Սրբազանը նշեց, որ այս արարողութեամբ կը յիշենք Աստուածորդուն աշխարհ առաքելութեան ամենէն հիմնական պատճառը. Ան

մարդկութեան մեղքերը ուսին առած, յանձն առաւ խաչը բարձրանալ ու մեղաւոր մարդուն համար իր կեանքը նուիրել: Ան յայտնեց, որ մեզի կը մնայ հաւատալ ու ապաւինիլ Յիսուսի, ու մեր արարքներով ու գործերով ցոյց տալ, թէ իբրեւ բարի զաւակները Երկնաւոր Յօր՝ մենք ալ անհուն սեր ունինք իրեն հանդէպ, պատրաստ ենք մեր կեանքը կերտելու համաձայն իր պատուիրաններուն:

Ս. Յարութեան տօնի նախօրեակին, Շաբաթ երեկոյ, Ճրագալոյցին, Առաջնորդ Սրբազանը Ս. Պատարագը մատուցանեց Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ ու հաւատացեալներուն տուաւ Զրիստոսի յարութեան աւետիսը: Ան աղօթք բարձրացուց առ Աստուած, որ իր Միածինին Ս. Յարութեան ոգիով հարստացնէ բոլոր հաւատացեալներուն կեանքը, յարութեան ու վերականգնումի կամքը տարածէ մեր ժողովուրդի ու հայրենիքին վրայ:

GOOD FRIDAY AND EASTER EVE SERVICES

On the evening of Friday, April 10th, 2009, the burial of Jesus Christ was



commemorated with services in all Prelacy Churches. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, officiated over the service at Forty Martyrs Church in Orange County and delivered his message on this solemn occasion.

The Prelate stated to the faithful that this service is a reminder to us all of the primary reason for Jesus' earthly ministry, which was to take on our sins and our burdens and to sacrifice His life

for our salvation. He concluded with a call to the faithful that we must place our absolute faith and trust in Him, live God-pleasing lives according to His

commandments, and demonstrate our love for Him through our deeds and actions

On the evening of Saturday, April 11th, the Prelate celebrated Easter Eve Divine Liturgy at St. Sarkis Church in Pasadena. In his sermon, the Prelate prayed for the renewing and reviving message of the Glorious Resurrection of Jesus Christ to enrich the lives of our faithful and our nation.
